

ԵՐՆԵԿ, ԹԵ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ...



Սուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, քանաստեղծուհի

Հայրենիքում և սփյուռքում ապրող սիրելի հայրենակիցներ,
Մոտենում է Նոր տարին, և մեր սրտերը նորից բաբախում են լավի, բարու, գեղեցիկի սպասումով: Ամենամեծ սպասումը դա խաղաղության սպասումն է, հույսը, որ այս տարում ամեն բան լավ է լինելու: Հայր վերագտնելու է իր կորցրած հավատն ու միասնությունը, և սփյուռքը, և հայրենիքը ձեռք ձեռքի կառուցելու են փոթորիկների միջով անցնող մեր տապան-Հայաստանը:

Այս օրերին ես Հայաստանում եմ: Հրատարակել եմ իմ 9-րդ ժողովածուն և այն վերնագրել եմ «Լույս կլինի»:

Մի րեկի հայրենակից,

Թող իրոք լույս լինի մեր երկրի համար, համայն մարդկության համար, թող չարը գնա անցնող տարվա հետ, թող իսպառ լռեն զենքերը և մեր բուժաշխատողները գնան վաստակած հանգստի: Թող հայ զինվորը սահմանին կանգնի անսասան, վստահ ու համարձակ, թող հայ գիտնականը նոր ուղեծիր գծի իր ազգի համար, թող հայ մարդիկը մեր եռագույնը ծածանի աշխարհի բազում հարթակներում, թող բոլոր հայ օջախներում նորածնի ճիշ լավի: Թող հայ լեզուն, հայ եկեղեցին ու հայ ընտանիքը մշտապես լինեն մեր սիրտ և հոգածության տաճարը: Թող չլինի համաճարակ և պատերազմ: Թող լինի լույս:

Շնորհավոր Նոր տարի և Մուրբ ծնունդ:

Ոչ թե ձյան ու ցրտի միջից,
Այլ տաք սրտից, մոր տաք սրտից,
Թող սկսվի Նոր տարին,
Որ ողջ տարի
սերը դառնա խաղալիք,
Գունեղ, փայլուն, հավատարիմ
Չկոտրվի, չփշրվի ու հայացքը փայփայի:
Մոր սրտից է թռչում նաև աղավինին
Աղավնաթև խաղաղություն նվեր իջնի
աշխարհին:
Մոր աչքերից, մոր հայացքից թող սկսվի
Նոր տարին
Բարությունը ձյունի նման թող սփռվի
աշխարհում...

Սուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արդա ՄԱՅԱԿԱՆՅԱՆ, գրադարանավար

Իմ սիրելի հայ ժողովուրդ,
Ավարտվեց 2021 թվականը, թվական, որտեղ կորցրեցինք և գտանք մերօրյա հերոսներին, որոնց հավերժ հիշելու ենք երախտագիտության խորը զգացումով: Էրժվարություններով և փորձություններով անցած 2021 թվականից քաղած դասերը, արձանագրած ձեռքբերումները թող գալիք տարին նոր ուժով ու ոգևորությամբ սկսելու հնարավորություն տան մեզ բոլորին:

Մաղթում եմ, որ 2022 թվականը լինի խաղաղության տարի: Հայաստանի սահմանին թող իսպառ բացակայեն կրակոցները, 2022 թվականին միայն տոնական հրավառություններ լինեն, բոլորի ընտանիքներում միայն խինդ ու ծիծաղ լինի: Աշխարհասփյուռ հայությանը համբերություն, մեր զինվորներին անփորձանք ծառայություն և բարի վերադարձ եմ մաղթում:

Եվս մի քանի օր, և երկրագունդն այս տարվա վերջին պտույտը կկատարի իր առանցքի շուրջ... Նոր տարի նոր հույսեր, նպատակներ, նվիրական երազանքներ, խինդ ու հրճվանք: Ինչու չէ, նաև անցնող ժամանակի ավստանք, դրանից ծնված տրտմություն, հիասթափություն ու... նոր սպասում:

Ամանորը հայ ժողովրդի համար եղել ու մնում է ամենաժողովրդական, ամենասիրելի, սպասված և մեծ շուքով նշվող տոնը: Հայի օջախում բարձրացվող կենաց գավաթներով բարեմաղթանքները միշտ հնչել ու հնչում են շոքայությամբ, առանց ձևականությունների:

Իսկ ինչպե՞ս են հնչում մերօրյա բարեմաղթանքները: Ի՞նչ են կամենում միմյանց, Հայաստանին, հայ ժողովրդին ու աշխարհին մեր համայնքի ներկայացուցիչները: Ի՞նչ են սպասում գալիքից:



Մեր երկիրը փոքր է, բայց հզոր է, մենք քիչ ենք քանակով, բայց համախմբված ենք, հոգով ու կամքով ուժեղ:

Աշխարհի որ ծայրում էլ գտնվենք, եկեք չմոռանանք, որ մենք Հայ ենք:

...Աշխարհ անցի ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա


Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա ըն եմ սիրում:

Շնորհավոր Ամանոր և Մուրբ ծնունդ:

Շովինար ՍԱՐԳՍՅԱՆ, Ռոստովի թիվ 110 դպրոցի հայերեն խմբակի ուսուցչուհի

Մի րեկի՝ հայրենակիցներ, Շնորհավորում եմ բոլորին Ամանորի և սուրբծննդյան տոների կապակցությամբ:

Ուզում եմ՝ հավատով լցվենք, գնահատենք ու գոհանանք մեր ունեցածով: Ավելի շատ հնարավորություն ունենանք արարելու, ստեղծագործելու, աշխատելու և ստեղծելու:



Շնորհավոր Ամանոր և Մուրբ ծնունդ:

ձելու նոր հարթակներ համաշխարհային պատմության էջերում:

Թող մեր Հայաստան աշխարհում թևածի խաղաղությունը, սերն ու կարոտը միախառնված՝ հյուրընկալվեն բոլոր տներում:

Մեր գոհված տղաների շիրիմներին լույս իջնի, ու այդ լույսը միասնության ու պայքարի հզոր ուժ դառնա:

Տարին թող հաղթանակի՝ ու արդարության ն տարի լինի:

Լիլիթ ԹԵՎՈՍՅԱՆ, Ռոստովի թիվ 83 դպրոցի հայերեն խմբակի ուսուցչուհի

Այս Նոր տարին էլ է շատ սպասված, ցանկալի և խոստումնալից...

Մենք ընդառաջ ենք գնում նոր իրականության, նոր երազանքի: Ե՛վ այսօր, և երեկ հայի իղձը նույնն է եղել...

«...Երևեկ, թե այս նոր տարին, վերջ տար հայու ցավերին...», — ասել է բանաստեղծը: Ցավին հաղթողը ուրախությունն է, այնպես ինչպես խավարին հաղթողը լույսն է:

Լույսը որպես նպատակ են ընտրել Ռոստովի հայ համայնքի պարի, երգի, հա-



յոց պատմության ու հայոց լեզվի ուսուցիչները: Ես այս ուսումնական տարում եմ անդամագրվել այս հրաշալի կոլեկտիվին, որտեղ յուրաքանչյուրը խիզախ մարտիկ է. հայապահպանության ճակատի քաջ դեսպան: Ուրախ ու հպարտ եմ, որ մանկավարժների իմ գերդաստանի հայրենավեր ավանդույթները պիտի շարունակեմ օտար երկրում՝ վառ պահելով հայի հայրենիքը Հայոց լեզուն:

Շատ պիտի խնդրեի մեր հայ մայրերին ավելի շահագրգիռ լինել իրենց ընտանիքներում հայոց լեզուն կիրառելիս:

Թող այս նոր տարին խինդով ու ուրախությամբ լցնի մեր հայ մայրերի ու մանուկների սրտերը: Անցնող փոթորիկներից թող չկոտրվի ազգի ոգին, քանզի այն՝ ինչ մեզ չի սպանում, դարձնում է ավելի ուժեղ:

Իմ ամանորյա ամենակարևոր բարեմաղթանքը:

Իմ սիրելի հայեր, աշխարհի որ ծայրում էլ լինեք, ոչինչ պարտք չմնաք իրար, բացի Միտուց:

Շնորհավոր Ամանոր և Մուրբ ծնունդ:

Լուսինե ՊԵՏԱՆՅԱՆ, Ռոստովի թիվ 19 գիմնազիայի հայերեն խմբակի ուսուցչուհի



2021 թվականը ձևավոյեց աշխարհը, փոխեց մարդկանց ծրագրերը, երազանքները, ստիպեց վերանայել ապրելակերպն ու աշխարհընկալումը:

Այն ձախողեց ամենակարևոր և սպասված իրադարձություններն ու խլեց ամենաթանկը՝ մարդկային կյանքեր:

Շեռացող տարին մեզ սովորեցրեց ամենից առավել գնահատել խաղաղ երկրիքն ու հարազատ մարդկանց ներկայությունը մեր կողքին:

Աշխարհն այնպես է ստեղծված, որ անհնար է ապրել՝ խուսափելով փորձություններից. դրանք անցնում են, իսկ մենք սերտում ենք դասեր, որոնք մեզ ավելի լավ են դարձնում:

2022 թվականը թող լինի խաղաղության, առողջության, ուժի, հավատի և վերածննդի տարի:

Այլևս թույլ չտանք կյանքին, հանգամանքներին ու փորձություններին խլել մեզանից այն ամենը, ինչը մեզ երջանակացնում է, ոգեշնչում, ստիպում ձգտել նոր հաղթանակների ու նվաճումների:

Թող գալիք տարում մեր ուժն օգտագործենք միայն աշխարհն ավելի լավ դարձնելու, այլ ոչ վիշտն ու ցավը հաղթահարելու համար:

Սկսենք 2022-ը հավատով, որ կյանքը դեռ կարող է մեզ դրական խմաստով զարմացնել:

Թող իրականանա մեր բոլոր սպասումներն ու երազանքները:

Ու թող Նոր տարին միայն բարօրություն և խաղաղություն բերի մեր Հայրենիքին ու մեր ընտանիքներին Հայաստանում, Արցախում և Սփյուռքում:

Շնորհավոր Ամանոր և Մուրբ ծնունդ:

Այսօր էլ հայ մարդու շուրթերից հնչող բարեմաղթանքն անկեղծ է՝ հային բնորոշ սրտաբացությամբ ու անկեղծությամբ: Ցանկանանք, որ դրանք իրականություն դառնան: Դեն նետեք հիասթափությունների ու հոգսերի բեռը, անվարան պացեք նվիրական երազանքների իրականացման ծիրով... Ու թող ճանապարհը գալիք տարում լինի լուսավոր, ինչպես Հարդագողը պայծառ կեսգիշերին:

Պատրաստե՛ք՝ Արմինե ՀՈՎՍԵԹՅԱՆԸ

